ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1960 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Աբոս Հովհաննիսյան

ԷԴՄՈՆԴ ԲԸՐԿԸ ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆԻ ՄԱՍԻՆ

18-րդ դարի անգլիական հրապարակագիր և մտածող Էդմոնդ Բըրկի «The correspondence of Edmund Burke» վերնագրով 1958 թ. լույս տեսած նամականու առաջին հատորում զետեղված է նրա 1757 թ. օգոստոսի 7 թվակիր մի նամակը՝ ուղղված հայ քաղաքական գործիչ Հովսեփ Էմինին։ Խմբագրական ծանոթությունից տեղեկանում ենք, որ նամակի հետ ծրարված է եղել նաև Բըրկի կնոջ, Ուիլ Բըրկի, կողմից Էմինին ուղղված գրությունը, որը հասկանալի պատճառով դուրս է ընկել հրապարակված նամականուց։ Պիտի կարծել, որ հաջորդ հատորներում կարող են հայտնվել Էմինին ուղղված ուրիշ նամակներ, որչափ Բըրկի և նրա հայ բարեկամի թղթակցությունները շարունակվել են նաև հետագայում։ Այսպես, մեզ ծանոթ է 1789 թ. մարտի 29 թվակիր Էմինին ուղղված Բըրկի մի այլ նամակը, ուսկից տեղեկանում ենք, որ մինչև այդ ևս նրա հետ շարունակվելիս է եղել Բըրկի և նրա կնոջ նամակագրական կապը։ 1789 թվականի այդ նամակի հենց սկզբում Բըրկը գրում է Էմինին, թե «ինձ իրավամբ մեղադրում եք, որ ձեր գրություններին կանոնավոր կերպով չեմ պատասխանում, բայց վստահ եղեք, որ ոչ կինս և ոչ էլ ես չենք մոռացած ձեզ»[1]։

Պիտի սպասել, որ Բըրկի նամականու հաջորդ հատորներում կարող են լինել նաև կողմնակի նյութեր, որոնք կարող են նպաստել Էմինի և նրա անգլիական նշանավոր այդ բարեկամի փոխհարաբերությունների լուսաբանությանը։ Այսպես, հենց Բըրկի նամականու 1960 թ. լույս տեսած երկրորդ հատորում հանդիպում ենք Բըրկի կողմից երրորդ անձնավորության հասցեագրված մի գրության, ուր Բըրկը կանգ է առնում Էմինի գործունեության վրա և տալիս նրա մասին ջերմ դրվատական։ Վարր դեռ առիթ պիտի ունենանք վերադառնալու այդ գրության։ Սրանից իսկ անկախ, ելնելով այն իրողությունից, որ երիտասարդ Էմինի Լոնդոնում դեգերած տարիներին Բըրկը լախտորոշ դեր է խաղացել նրա կյանքում, վերջինիս գրական ժառանգությունը պիտի դիտվի որպես կարևոր աղբյուր, որ լույս կարող է սփռել ոչ միայն Էմինի իդեական կազմավորման, այլև նրա ժամանակաշրջանի վրա ընդհանրապես։

Այստեղ անհրաժեշտ է, սակայն, որոշ վերապահություն Բըրկի անձնավորության մասին։ Հայտնի է, որ 18-րդ դարի վերջին տասնամյակում Բըրկը

[1] F. Prior, Life of the right honorable Edmund Burke, էջ 42 և հետ. Տե՛ս նաև այդ նամակի Սա. Պալասանյանի հայերեն թարգմանությունը, որ լույս է տեսել «Մասյաց Աղավնում», 1856, էջ 271—72։

հանդես եկավ որպես 1789 թվականի ֆրանսիական ռևոլյուցիայի դեմ ծայր առած անգլիական բուրժուական ռեակցիայի առավել աչքի ընկած դաղափարախոսներից մեկը։ Պիտի արձանագրել այնուամենայնիվ, որ Էմինի հետ ունեցած իր անմիջական հանդիպումների տարիներին, 1755—57 թվականներին, ինչպես նաև իր քաղաքական-հրապարակախոսական գործունեության այն շրջանում, որը ընդգրկում է 18-րդ դարի 60—80-ական թվականները Բըրկը հանդիսանում էր անգլիական բուրժուական մտավորականության պրոգրեսիվ ներկայացուցիչներից մեկը։ Կասկած չկա, որ նա այդ ժամանակաշրջանի լուսավորական պրոգրեսիվ հայացքներով է հենց, որ կարող էր ազդած լինել և ազդել է իրոք երիտասարդ իր հայ բարեկամի, Հովսեփ Էմինի, ազատասիրական հայացքների զարգացման վրա։

Էմինի քաղաքական հայացքները կազմավորվել են 18-րդ դարի հայ ազատագրական մտքի զարգացման մայրուղու վրա դրա հետ միատեղ անդրադարձնելով մի ժամանակ առաջավոր դեր ստանձնած անգլիական բուրժուական լուսավորական փիլիսոփայության զորեղ ներգործությունը։ Մասնավորապես Բըրկը մեկն էր Էմինի այն հովանավորողներից, որոնց, ինչպես ճիշտ դիտում է Էմինի կյանքի հետազոտողը, «դուր չէին գալիս նրա հայրենասիրական երազանքները»։ Ի վիճակի չլինելով նպաստելու դրանց իրագործմանը, նրանք այնուամենայնիվ «ջանք չէին խնայում գեթ օգտակար լինելու իրենց հայ բարեկամի ուսումնառությանը և նյութական վիճակի բարելավմանը»[2]։

Եթե Էմինի կյանքում Բըրկի կատարած դրական դերի նկատմամբ նման եզրակացության գալու համար մինչ հիմա գլխավորապես առկա էր հենց նրա հայ բարեկամի անգլերեն ընդարձակ ինքնակենսագրությունը, ուր ուշագրավ վկայություններ կան Բըրկի մասին, ներկայիս այդ բանում պիտի համոզեն նաև վերջինիս այն էջերը, ուր արտակարգ ջերմ տողեր են հանդիպում Էմինի մասին, դրսևորելով միաժամանակ 18-րդ դարի անգլիական երևելի գործչի խոր ակնածանքն ու բարձր համարումը նրա անձի ու քաղաքական առաքելության հանդեպ։

1757 թվականին գրած իր նամակը Բըրկը ուղղել էր Էմինին, երբ վերջինս անցել էր Գերմանիա և, իբրև անգլիական բանակի կամավոր, սպայի կոչումով մասնակցել յոթնամյա պատերազմին։ Պատասխանելով ռազմաճակատից ստացած Էմինի նամակին, Բըրկը ուրախություն է հայտնում, որ պատերազմական թոհ ու բոհի մեջ Էմինը ժամանակ է գտել մտաբերելու և գրելու իրեն։ Հայտնում է, որ երբեք չի դադարել հիշելու Էմինին և ցանկանալու, որ ոչ միայն անփորձ մնա նա, այլև պատվով կատարի զինվորի պարտականությունները։ Գոհ է, որ Գերմանիայում գտնված անգլիական բանակի գլխավոր հրամանատարը, դուքս Քեմբեռլենդը, ոչ միայն ջերմ ընդունելություն է ցույց տվել նրան, այլև ըստ ամենայնի դնահատել նրա ռազմական ընդունակություններն ու մարդկային բարձր արժանիքը։ Ցավ հայտնելով Հաստենբեկի մոտերքում անգլիական բանակի կրած անհաջողության առիթով, Բըրկը և Էմինի անգլիացի մյուս բարեկամները գեթ մասամբ մխիթարված են նրա զորամասի «զարմանալի գործելակերպով»։ Քաջ գիտե, հարիավ, որ Էմինը այն մարդկանցից չէ, որոնք վճռական բոպեին կարող են թիկունք

[2] А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, Ереван, 1946, էջ 21-ի հետ. և 55։

դարձնել սպառնացող վտանգին։ Այնուամենայնիվ մտահոգված է Էմինի կացությամբ և դեգերում է երկմտանքի մեջ. արդյոք վիրավորված կամ գերված չէ՞ նա։ Նախախնամությունը, որ բարձր ոգի է ներշնչել Էմինին մեծ նպատակի համար, խորհում է Բըրկը, նրան կպահպանի նաև դրան հասնելու համար։ Չէ՞ որ Էմինը նրանցից չէ, ովքեր ձգտում են սովորական ծառայության միջոցով դանդաղաքայլ առաջադիմության, այլ մեկը նրանցից, ովքեր կոչված են փայլատակելու իրենց հայրենակիցների մեջ։ Այդ իսկ պատճառով Բըրկը կարծում է, թե նա չպետք է նպատակադրի այն, ինչ սազական է լավ սպասին, այլ միայն այն, ինչ վայել է լավ զորավարին։ Խոր համակրանք տածելով դեպի Էմինի փայփայած ազատագրական երազանքները, Բըրկը կամենում է, որ նա անվթար մնա՝ իր եռանդն ու ունակությունները հայ ժողովրդի օգտին ի սպաս դնելու համար։

Այս նամակը ստանալուց հետո Բըրկի հայ բարեկամի կյանքում սոսկալի դեպքերով ու արկածներով լի 15 երկար ու ձիգ տարիներ։ Այդ ժամանակամիջոցում Էմինը եղավ Ռուսաստանում, հանդիպում ունեցավ ռուս նշանավոր պետական գործիչների հետ, այցելեց Վրաստանը, ծանոթացավ վրաց Հերակլ 2-րդ թագավորի հետ և կատարեց նրա մի քանի ռազմական հանձնարարությունները, եղավ Էջմիածնում և Ղարաբաղում, կապեր հաստատեց և շփումներ ունեցավ Արևմտյան Հայաստանի հայ եկեղեցական և աշխարհական գործիչների հետ, մի պահ ապրեց և գործեց նույնիսկ Կովկասի լեռնականների ու ադրբեջանցիների մոտ։ Էմինը մասնակցեց կռիվների և աշքի ընկավ քաջագործություններով։ Այնուամենայնիվ՝ նրա կյանքի բուն նպատակը, այն, ինչի մասին երազել էր նա բոլոր իր թափառումների ժամանակ— հայ ժողովրդի քաղաքական ազատագրումը—մնաց անկատար։ Հայաստանի ազատագրման գաղափարը, որ անընդհատ զբաղեցնում էր նրա սիրտն ու միտքը, դեմ էր առնում անհաղթահարելի դժվարությունների։ Ո՛չ Հերակլ թագավորի, ո՛չ հայ մելիքների ու եկեղեցականների նպատակադրումները և ո՛չ էլ Ռուսաստանի այդ տարիների քաղաքականությունը չէին համընկնում նրա ձգտումների հետ, նպաստավոր իրադրություն ստեղծելով հայ կամ անդրկովկասյան ժողովուրդների քաղաքական տրամադրություններին ազատագրական շարժման լիցք հաղորդելու համար։ Բոլոր այս պարագաներից վճռականն ու բախտորոշը այն փաստն էր մանավանդ, որ Ռուսաստանը, այն պետությունը, որը 18-րդ դարի ընթացքում միակ հաստատուն ապավենն ու հուսակայանն էր անդրկովկասյան ժողովուրդների ազատագրման համար, Էմինի ժամանակ ակտիվ միջամտություն չունեցավ հայերի քաղաքական զարթոնքն ու ակնկալությունները խրախուսելու գործում։ Էմինի ձախողումը դրսևորում էր այն իրողությունը, որ առանց Ռուսաստանի միջամտության հեռանկարի 18-րդ դարում հայերի ազատագրման գաղափարը անկարող էր ստանալ տարածուն բնույթ կամ վերածվել մասսայական շարժման։

Այս կարող է բացատրել, բայց ոչ արդարացնել Էմինի այն ժամանակակիցների կարծիքը, որոնք քաղաքական բանդագուշանք էին համարում նրան ոգեշնչող նպատակը կամ ցնորք հռչակում հայերի ազատագրման նրա քարոզած ծրագիրը։ Եղան մարդիկ, որոնք այդ ծրագիրը համարեցին նրա արկածախնդրության պտուղ։ Եղան նաև այնպիսիները, որոնք սին փառասիրություն կամ

[3] The correspondence of Edmund Burke, vol. I. էջ 123 և հետ., Cambridge, 1958.

պարզ խաբերայություն նշմարեցին այն բանի մեջ, որ քաղաքական իր ծրագիրը գլուխ բերելու համար Էմինը մի պահ ազնվական ծագում էր վերագրել իրեն կամ թույլ տվել, որ իրեն մեծարեն որպես հայկական ապագա թագավորության... գահաժառանգի[4]։ Այսպես դատողները անգիտանում էին, որ ղեկավարի ծագման մեծարումը օրինաչափ երևույթ էր ազատագրական շարժումների անցյալում։ Որևէ ժողովրդի ազատագրման գաղափարը չէր կարող լեգիտիմության կնիք ստանալ Էմինի ապրած ֆեոդալ-միապետական աշխարհում, եթե այդ գաղափարի դրոշակակիրը չունենար կամ գեթ նրան չվերագրվեր «բարձր» ծագում։

Էդմոնդ Բըրկը մեկն էր Էմինի նպատակին հաղորդակից և նրան գաղափարամերձ ու սրտակից անձնավորություններից, որ մինչև վերջն էլ հավատարիմ մնաց նրա հետ հաստատած անկեղծ բարեկամության։ Ստացած գրությունների միջոցով իրազեկ դառնալով Էմինի հուսավրիպումներին և հայրենանվեր նրա գործունեությանը հանդիպած խոչընդոտներին, Բըրկը չձայնակցեց նրան չարախոսողների համերգին։

Բըրկի վերաբերմունքը դեպի Էմինի շարակրությունները ակներև է մանավանդ մեր հիշատակած նամակներում հանդիպող մի գրությունից, ուղղված Հնդկաստանում պաշտոնավարող Ջոն Ստյուարտին, ուր նշանակալից տողեր կան Էմինի մասին։ Այդ գրության մեջ Բըրկը բնութագրում է Էմինին որպես մի մարդու, որը հայ ժողովրդի ազատագրման համար գործադրած իր ջանքերի ձախողումից հետո հարկադրված է եղել վերադառնալ Հնդկաստան ու ապրել կարիքի ու աղքատության մեջ։ Բըրկը տալիս է միաժամանակ նրա ուշագրավ բնութագիրը։

«Նա—գրում է Էմինի մասին Բըրկը—խիզախեց կատարել մեծ գործեր, արեց մեծ ճիգեր, անցավ անսահման վտանգների միջով և ի վերջո ապավինեց Բենգալիա, հանգելով այն կետին, ուսկից սկսել էր իր թափառումները. մնաց առանց միջոցների ու բարեկամների»։ Հանձնարարելով Էմինին Ստյուարտի ուշադրությանը, Էմինի համար ստեղծված վիճակը Բըրկը անպատվաբեր է համարում հայ ազգի համար։ «Անհանդուրժելի է,—գրում է նա,—որ մի մարդ, որը պաշտպանություն էր գտնում (անգլիական) թագավորության և Գերմանիայի մեծամեծների կողմից, տարապարտուց ստիպված լինի անցկացնելու փոթորկահույզ իր կյանքի մնացորդը, անդլիական սետրլմենում՝ դատապարտված կարիքի ու մոռացության։ Գիտեմ, որ շատերը նրան համարում են խաբերա (impostor) մեկը։ Բայց ես կարող եմ վկայել նրա ճշմարտախոսության մասին սկսած այն ժամանակից, երբ նա դեռ չէր դրավել իր վրա հասարակական ուշադրությունը։ Կարող եմ վկայել նրա համբերության, անշահախնդրության և տոկունության մասին, որով կարողանում էր ինքնակատարելագործման հասնել գիտելիքների բոլոր բնագավառներում»։ Ի վերջո Բըրկը վերհիշում է նաև այն սխրագործությունները, որոնցով Էմինը աչքի էր ընկել յոթնամյա պատերազմի ժամանակ Գերմանիայում, հիշատակելով այն մասնակցությունը, որ ունեցել էր նա ֆրանսիական ծովեզրում կազմակերպված էքսպեդիցիաներում[5]։

---

[4] The life and adventures of Joseph Emin, an Armenian". London, 1792, էջ 214, 220, [illegible] և 631.

[5] The correspondence of Edmund Burke, v. II, էջ 359 և հետ։

Իր այս դրության մեջ Բրրկը ելնում էր այն դրությունից, որ Էմինի գործունեությանը ուղեկցած հանգամանքների ձախորդ դասավորությունը նրան չեն կարող զրկել գաղափարին նվիրված գործչի անբասիր անունից և սխրագործություններով վաստակած իր փառապսակից։

Արդար այս գնահատականին, պարզաբանության կարգով, կարելի է միայն ավելացնել, որ Էմինին հանդիպած անհաջողությունը ոչ թե նրա ունեցած անձնական վրիպումների, այլ նրա ժամանակաշրջանով պայմանավորված անպատեհությունների արդյունք էր։ Էմինի երազանքը, Ռուսաստանի հովանու տակ հայ-վրացական պետություն ստեղծելու նրա ծրագիրը, հիմնական այն գաղափարն էր հենց, որ Էմինից մի քանի տասնամյակ առաջ և Նրանից մի քանի տասնամյակ հետո արծարծում էին 18-րդ դարի ռուս, հայ կամ վրացի առաջավոր գործիչները։ Բայց, ինչպես նշեցինք, Էմինը ապարեզ իջավ, իր դարի առաջատար հայացքների ջատագովի դերում, մի ժամանակամիջոցում, երբ պատմական իրադրությունը բացարձակորեն աննպաստ էր դրանց կենսագործման համար։ Ժամանակն ու միջավայրը անհարիր էին ոչ միայն այդ հայացքների կենսագործմանը, այլև նույնիսկ դրանց անարգել արծարծման ու տարածման համար։